

ըսել՝ թէ բոլոր այն արմտիք կամ տոհմականք, որոնք ուրոյն կոչումներով յիշուած են մեր մատենագրերէն, կ'ելնէին նաեւ հայ հողէն ու կը մտնէին հայ ընտեմարանաց մէջ: Այսպէս մեր շատ հեղինակաց ծանօթ են եւ Ագաթանգեղոսէն ի մի հաւաքուած՝ «սերմանիքն օգտակարք մարդկան. որպէս ցորեսակն եւ հաճարն եւ գարին եւ կորեակն, գառարսն եւ ոսպնն, ռոռնն, որիզն եւ դկոշոն, սխտնն եւ այլ բազում սերմանիք» (482): Ասոցմէ գարին ու կորեակն աւելի անասնոց կերակուր էին, եւ ուրոն աւելի թռչնոց կը տըրուէր (Գոշ՝ Առկ. 42, 46): Հոս կար նաեւ արմտեաց ոմանց ալիշրը (Ալաւ. Գ), որոց գործածութիւնը պիտի տեսնենք յետոյ: Բակրայն թէ ողջ կը գտուէր եւ թէ աղօրեօք ջախջախուած (Գոշ, 44, 46): Մեր նախնիք անտարակոյս կը ընտեմարանէին նոյնպէս չոր մրգեր, արմառ, բոշո (Ագթ. 479), ընկոյզ, նոշ (անդ. Գոշ Առկ. 18, 26). չամիչ (Թիւք, 2, 3 եւն. Վաստ. 133) կամ չամչեայ (Թագ. Ա, 1, 12. Բ. Ժ2, 1), զոր Քսենոփոն ալ կը տեսնէր Հայոց քով (90), եւ կաղիկ (Ես. 2, 13. Փաւս. 18. Գոշ՝ Առկ. 27): Դարձեալ կային հոս համեմիչները, սոխ եւ խստոր (Թիւք, ԺԱ, 5. Գոշ՝ Առկ. 54-5), անանոշի (Մտթ. ԻԳ,